



State of California-Health and Human Services Agency  
**Department of Health Care Services**

P.O. Box 989009, West Sacramento, CA 95798-9009



XXXX XX, XXXX

16141\_SFN002012D\_DUP-000008-38-E



John Case Sample  
 1234 Sample Street  
 Sample City CA 99999



## Կարևոր տեղեկություն Ձեր երեխայի «Medi-Cal»-ի նպաստների վերաբերյալ

### Չարգելի ծնող/խնամակալ

Խնդրում ենք կարդալ այս նամակը, որը կարևոր տեղեկություններ է պարունակում ստորև նշված Ձեր երեխայի առողջապահական նպաստների վերաբերյալ: Իր առողջության ապահովագրության մեջ տեղի ունեցած փոփոխության պատճառով՝ Ձեր երեխան, այստեղ նշված՝ ուժի մեջ մտնելու ամսաթիվից, ընդգրկվելու է հետևյալ ծրագրերում:

Անունը	Առողջապահական ծրագիրը	Ատամնաբուժական ծրագիրը	Ուժի մեջ մտնելու ամսաթիվը
John Bene1 Sample	Medical Plan1	Denti-Cal	September 1, 2016
John Bene2 Sample	Medical Plan2	Denti-Cal	September 1, 2016
John Bene3 Sample	Medical Plan3	Denti-Cal	September 1, 2016
John Bene4 Sample	Medical Plan4	Denti-Cal	September 1, 2016

Ձեր երեխայի առողջության ապահովագրությունը փոխվել է ամբողջական «Medi-Cal»-ի ծառայությունների: Դա նշանակում է, որ այժմ Ձեր երեխան ավելի շատ նպաստներ է ստանում: Դա նշանակում է նաև, որ Ձեր երեխան բուժապասարկում է ստանալու «Medi-Cal» կառավարվող բուժապասարկման որևէ առողջապահական ծրագրի միջոցով (որը կոչվում են նաև «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր): Այժմ, երբ Ձեր երեխան ամբողջական «Medi-Cal» ունի, նա կարող է շարունակել բուժապասարկում ստանալ ցանկացած բժշկից, որն ընդունում է «Medi-Cal» «վճարում ծառայության դիմաց» (որը կոչվում են նաև սովորական «Medi-Cal»): «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամագրվելուց հետո Ձեր երեխան իր բուժապասարկումն այդ ծրագրի միջոցով կստանա:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը բուժապասարկում է տրամադրում բժիշկների ցանցի միջոցով, որոնք հիմնականում կենտրոնանում են նախնական և բուժկանխարգելիչ բուժօգնության վրա: Երբ Ձեր երեխան «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամ դառնա, ծրագիրը կօգնի կազմակերպել Ձեր երեխայի բուժապասարկումը, կօգնի Ձեզ բժիշկներ և մասնագետներ գտնել, բուժքույրական խորհրդատվության շուրջօրյա հեռախոսագծի ծառայություններ կտրամադրի, Ձեզ աջակցություն ցույց կտա անդամների սպասարկման ծառայության միջոցով, բժշկի այցելելիս կարող է օգնել Ձեզ փոխադրամիջոցի հարցում և ավելին: «Medi-Cal»-ի այդ առողջապահական ծրագիրը Ձեզ կօգնի նաև գտնել Ձեր երեխային անհրաժեշտ այն ծառայությունները, որոնք նախատեսված չեն տվյալ ծրագրի ապահովագրով: Եթե Դուք Ձեր երեխային ավելի վաղ չանդամագրեք որևէ ծրագրի, նա «Medi-Cal»-ի վերը նշված առողջապահական ծրագրի անդամ կդառնա ոչ ուշ, քան 9/1/2016.

Փոստով Դուք շուտով «Health Care Options»-ի ընտրության փաթեթ (Health Care Options Choice Packet) կստանաք, որում պարունակվող տեղեկությունները կօգնեն Ձեզ առողջապահական ծրագիր և բժիշկ ընտրել: Կարող եք նաև զանգահարել «Health Care Options» (HCO)՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով, և հեռախոսով անդամագրել Ձեր երեխային:

### Ես ի՞նչ ընտրություններ ունեմ

1. Դուք կարող եք ոչինչ չանել: Ձեր երեխան կընդգրկվի «Medi-Cal»-ի վերը նշված առողջապահական ծրագրում հետևյալ օրվանից 9/1/2016.
2. Դուք կարող եք Ձեր երեխային անդամագրել «Medi-Cal»-ի վերը նշված առողջապահական ծրագրին և նրա համար բժիշկ կամ կլինիկա ընտրել ավելի վաղ, քան 9/1/2016.
3. Դուք կարող եք Ձեր երեխային անդամագրել «Medi-Cal»-ի վերը նշված ծրագրից տարբեր առողջապահական ծրագրի, ապա այդ ծրագրից նրա համար բժիշկ կամ կլինիկա ընտրել:

Եթե ցանկանում եք Ձեր երեխային ավելի վաղ անդամագրել վերը նշված ծրագրին կամ մեկ այլ ծրագրի անդամագրել, կարող եք զանգահարել HCO, և Ձեզ կօգնեն այդ անել, կամ փոստով ուղարկել Ձեր ընտրությունը: Եթե Դուք վերը նշված ժամկետից շուտ անդամագրեք Ձեր երեխային որևէ առողջապահական ծրագրի, նա կարող է ծրագրում ընդգրկվել արդեն հաջորդ ամսվա 1-ից:



**Հեռախոսով՝ Ձանգահարեք HCO՝ 1-800-840-5032 [TTY՝ 1-800-430-7077] հեռախոսահամարով:**

**Փոստով՝** «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրեք Ձեր երեխայի համար, ապա լրացրեք «Health Care Options»-ի ընտրության փաթեթը (Health Care Options Choice Packet) ու վերադարձրեք Ձեզ ուղարկված, առաքման համար վճարված ծրարում:

Բացի այդ, Ձեր երեխան **ատամնաբուժական** ծառայություններ կստանա «Medi-Cal»-ի ատամնաբուժական ապահովագրության ծրագրի կողմից, որը կոչվում է «Denti-Cal»: Դուք կարող եք ատամնաբուժական ծառայությունների մասին տեղեկություններ գտնել այս ծանուցման հետ ուղարկված «Հաճախակի տրվող հարցեր» էջում: Ձեր երեխան պետք է այնպիսի ատամնաբույժի այցելի, որն ընդունում է «Denti-Cal»: Ձեր մոտակայքում ատամնաբույժ գտնելու համար խնդրում ենք զանգահարել **«Denti-Cal»-ի նպաստառու հաճախորդների սպասարկման հեռախոսագծով՝ 1-800-322-6384 [TTY՝ 1-800-735-2922]:**

Այս ծանուցման հետ ուղարկված «Հաճախակի տրվող հարցեր» էջում նկարագրվում են նաև «Medi-Cal»-ի միջոցով տրամադրվող այլ ծառայությունները: Դրանց թվում են հոգեկան առողջության ծառայությունները, ոգելից խմիչքների և թմրադեղերի կախվածությունից բուժման ծառայությունները, ակնաբուժական ծառայությունները և թշկական առունով անհրաժեշտ այլ ծառայություններ:

**Այժմ ես ի՞նչ պետք է անեմ:**

- Խոսեք Ձեր երեխայի բժշկի կամ կլինիկայի հետ և պարզեք, թե արդյոք վերջինս աշխատում է «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի հետ:
- Ընտրեք տարբերակներից մեկը՝ այս նամակի «Ես ի՞նչ ընտրություններ ունեմ» բաժնում:
- Ծրագրերի ընտրության մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք HCO կամ սպասեք, մինչև փոստով ստանաք Ձեր «Health Care Options»-ի ընտրության փաթեթը (Health Care Options Choice Packet): Փաթեթը դրված կլինի «Department of Health Care Services»-ի կողմից ուղարկված մի մեծ ծրարում և Ձեր լեզվով կլինի:

**Ու՞մ դիմել լրացուցիչ հարցերի դեպքում:**

**Ոգելից խմիչքների և թմրադեղերի օգտագործման հետ կապված խնդիրների համար տրամադրվող ծառայություններ**  
Շտապ խորհրդատվության, թունազերծման ծառայությունների, ինչպես նաև ստացիոնար վերականգնողական կամ երկարատև խնամքի երթևեկ կենտրոններում բուժում ստանալու հարցում օգնության համար դիմեք Ձեր տեղական ծրագրին՝ այցելելով Ոգելից խմիչքների և թմրադեղերի ծրագրի շրջանային տեղեկատուի (Alcohol and Other Drugs Program County Directory) կայքը՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/DMC-CountyNumbersDirectory.aspx>

**Հոգեկան առողջության ծառայություններ**

Ոչ ճգնաժամային, ընդհանուր ծառայությունների և տեղեկատվության համար դիմեք հոգեկան առողջության Ձեր տեղական դեպարտամենտին՝ այցելելով Շրջանի հոգեկան առողջության կոնտակտային ցուցակի կայքը՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MHPContactList.aspx>

**Health Care Options:**

«Health Care Options» էթե հարցեր ունեք Ձեր երեխայի «Medi-Cal»-ի նպաստների մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին, օգնության կարիք ունեք հեռախոսով անդամագրվելու կամ Sacramento-ի շրջանում ատամնաբուժական ծրագիր ընտրելու հարցում, կամ եթե ցանկանում եք այս նամակը մեկ այլ լեզվով, խոշորատառ տպագրությամբ, ծայնագրված կամ Բրայլի գրատիպով ստանալ, զանգահարեք կամ այցելեք նրանց կայքը:

**1-800-840-5032 [TTY՝ 1-800-430-7077]**

աշխատում է ժամը 8:00 a.m.-ից մինչև 5:00 p.m.

երկուշաբթի-ուրբաթ օրերին

<http://www.healthcareoptions.dhcs.ca.gov/>

**«Denti-Cal»-ի նպաստառու հաճախորդների սպասարկման բաժին**

Sacramento-ից բացի մնացած բոլոր շրջաններում «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծառայություններ տրամադրող գտնելու, կլինիկական ստուգումների ժամադրություն ստանալու մասին տեղեկությունների համար կամ «Denti-Cal»-ի հետ կապված ընդհանուր բնույթի հարցերի դեպքում զանգահարեք կամ այցելեք նրանց կայքը:

**1-800-322-6384 [TTY: 1-800-735-2922]**

աշխատում է ժամը 8:00 a.m.-ից մինչև 5:00 p.m.

երկուշաբթի-ուրբաթ օրերին

<http://www.denti-cal.ca.gov/WSI/Bene.jsp?fname=ProvReferral>

Գործող օրենքով՝ մենք պարտավոր չենք ներգաղթի մարմիններին Ձեր երեխայի մասին տեղեկություններ տրամադրել կամ որևէ այլ կերպ նրանց հետ համագործակցել այդ հարցում, և ո՛չ էլ կանավոր կերպով կանենք դա:

# Հաճախակի տրվող հարցեր «Medi-Cal»-ում Ձեր երեխայի նպաստների ընդլայնման մասին

## 1. Ի՞նչ է «Medi-Cal»-ը:

«Medicaid» ծրագիրը California-ում «Medi-Cal» է կոչվում: Այն բուժսպասարկում, ատամնաբուժական օգնություն, հոգեկան առողջության ծառայություններ, ոգելից խմիչքների և թմրադեղերի կախվածությունից բուժում, ակնաբուժական օգնություն և այլ անհրաժեշտ առողջապահական ծառայություններ է տրամադրում միլիոնավոր California-ցիների: «Medi-Cal»-ի մասին կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ <http://www.dhcs.ca.gov> հասցեում:

## 2. Ի՞նչ երեխան շարունակում է ապահովագրված մնալ «Medi-Cal» ծրագրով:

Այո, Ձեր երեխան այժմ էլ «Medi-Cal» ունի, բայց հիմա այն «ամբողջական» է: Դա նշանակում է, որ այժմ «Medi-Cal»-ով Ձեր երեխայի ապահովագրությունն ավելի շատ նպաստներ է նախատեսում: Այդ նպաստների մեծ մասը Ձեր երեխան կստանա, երբ ընդգրկված լինի «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում:

## 3. Ի՞նչո՞ւ է իմ երեխայի «Medi-Cal»-ը փոխվում:

California-ում Senate Bill (SB) 75 կոչվող նոր օրենք է ընդունվել: Այժմ մինչև 19 տարեկան բոլոր երեխաները կարող են ամբողջական «Medi-Cal» ստանալ, եթե բավարարեն այն ստանալու բոլոր պահանջները: Այժմ նշանակություն չունի, թե նրանք ինչ ներգաղթի կարգավիճակ ունեն:

## 4. Այժմ իմ երեխան «Medi-Cal»-ի ի՞նչ նպաստներ ունի:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի ծածկույթի մեջ, որում ընդգրկված է Ձեր երեխան, մտնում են անվճար բժշկի այցելությունները, պատվաստումները (ներարկումները), դեղերը, ակնաբուժական օգնությունը և հիվանդանոցում մնալը: Ձեր երեխան նախնական բուժսպասարկման բժիշկ կունենա և, անհրաժեշտության դեպքում, ուղեգրեր կստանա մասնագետների այցելելու համար: «Medi-Cal»-ի այլ նպաստների մասին կարդացեք 10-րդ հարցը:

## 5. Ի՞նչ երեխան կարո՞ղ է փոխել «Medi-Cal»-ի իր ծրագիրը:

Այո, Դուք կարող եք ցանկացած ժամանակ խնդրել, որ փոխեն Ձեր երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը: Ծրագիրը փոխելու հարցում օգնություն ստանալու համար, **խնդրում ենք զանգահարել «Health Care Options» (HCO)՝ 1-800-840-5032 [TTY՝ 1-800-430-7077]**, երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ 8 a.m.-ից մինչև 5 p.m.: Հետագայում Դուք միշտ կարող եք փոխել Ձեր երեխայի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը:

## 6. Ես ապահովագրի ամսական մուծումներ կատարելու՞ եմ «Medi-Cal»-ում ընդգրկված իմ երեխայի համար:

Եթե այժմ Դուք վճարում եք, ապա կշարունակեք վճարել: Ոչինչ չի փոխվի:

## 7. «Medi-Cal»-ում ես համավճարումներ կատարելու՞ եմ իմ երեխայի համար:

Համավճարումներ չկան: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը վճարում է Ձեր երեխայի բոլոր բժշկական ծախսերը: Եթե այսօր Դուք «ծախսերի բաժին» եք վճարում, ապա կշարունակեք այն վճարել:

## 8. Ո՞վ է լինելու իմ երեխայի բժիշկը «Medi-Cal»-ում:

Հանգամանքներից է կախված: Եթե Ձեր երեխայի ներկա բժիշկը նույնպես ընդգրկված է «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրում, ապա հնարավոր է, որ Դուք կարողանաք շարունակել նրա մոտ սպասարկում ստանալ: Եթե բժիշկը «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկված չէ, ապա Դուք ստիպված կլինեք նոր բժիշկ ընտրել: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը Ձեր ընտանիքին «Սպասարկողների ցուցակ» կուղարկի, որից Դուք կարող եք բժիշկ ընտրել: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի Հաճախորդների սպասարկման բաժնի աշխատակիցները կարող են ստուգել, թե արդյոք Ձեր բժիշկն ընդգրկված է իրենց ծրագրում: Եթե Դուք բժիշկ չընտրեք, «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրն՝ ինքը, Ձեր երեխայի համար բժիշկ կընտրի: Եթե այժմ Ձեր երեխան բժիշկ ունի, հարցրեք նրան, թե արդյոք նա աշխատակցում է «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի: Եթե այո, Դուք կարող եք Ձեր երեխային անդամագրել «Medi-Cal»-ի այդ նույն առողջապահական ծրագրին և շարունակել այցելել այդ բժիշկին:

## 9. Ի՞նչ կկատարվի այն դեպքում, եթե իմ երեխայի ներկա բժիշկը չի աշխատակցում «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի: Ի՞նչ երեխան կարո՞ղ է շարունակել նրան այցելել:

Եթե անցյալ 12 ամիսների ընթացքում Ձեր երեխան այցելել է մի բժշկի, որը չի համագործակցում «Medi-Cal»-ի

որևէ առողջապահական ծրագրի հետ, Դուք կարող եք «Բուժօգնության շարունակման» դիմում ներկայացնել: «Բուժօգնության շարունակում» նշանակում է, որ Ձեր երեխան կարող է մինչև 12 ամիս շարունակել այցելել իր ներկա բժշկին, եթե բժիշկը և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը համաձայնության գան այդ հարցում: Եթե Ձեզ «Բուժօգնության շարունակում» է անհրաժեշտ, խնդրում ենք դիմել «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի Զածախորդների սպասարկման բաժնի աշխատակիցներին:

## 10. «Medi-Cal»-ի ուրիշ ի՞նչ նպաստներ կարող է իմ երեխան ստանալ:

### Ատամնաբուժական ծառայություններ

Այժմ Ձեր երեխան կարող է ատամնաբուժական ծառայություններ ստանալ «Medi-Cal»-ի միջոցով:

- Եթե Դուք Sacramento-ի շրջանում եք ապրում, Ձեր երեխան այդ ծառայությունները կստանա կառավարվող ատամնաբուժական սպասարկման որևէ ծրագրի կողմից: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք **HCO` 1-800-840-5032 [TTY` 1-800-430-7077]** հեռախոսահամարով, կամ կարող եք «Ատամնաբուժական ծրագրի ընտրության թերթիկ» լրացնել, որը կստանաք Ձեր «Ծրագրի ընտրության փաթեթի» հետ:
- Եթե Դուք Los Angeles-ի շրջանում եք ապրում, ապա «Denti-Cal» ծրագիրը թույլ է տալիս բուժապասարկում ստանալ «Denti-Cal» ընդունող ցանկացած սպասարկողից: Կառավարվող ատամնաբուժական սպասարկման ծրագիրն այնպիսի ատամնաբուժական ծրագիր է, որը վճարում է Ձեր ատամնաբուժական նպաստները: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք **HCO` 1-800-840-5032 [TTY` 1-800-430-7077]** հեռախոսահամարով: Ձեր երեխայի ատամնաբուժական ապահովագրությունն ընտրելու համար Դուք կարող եք «Ատամնաբուժական ծրագրի ընտրության թերթիկ» լրացնել, որը կստանաք Ձեր «Ծրագրի ընտրության փաթեթի» հետ:
- Մնացած բոլոր շրջաններում Ձեր երեխան ատամնաբուժական ծառայություններ կստանա սովորական «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծրագրի միջոցով, որը կոչվում է «Denti-Cal»: Ձեր երեխան պետք է այնպիսի ատամնաբույժի այցելի, որն ընդունում է «Denti-Cal»:
- «Denti-Cal»-ի ատամնաբույժ գտնելու համար կարող եք զանգահարել **«Denti-Cal»-ի Զածախորդների սպասարկման բաժին` 1-800-322-6384 [TTY` 1-800-735-2922]** հեռախոսահամարով՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, ժամը 8:00 a.m.-ից մինչև 5:00 p.m.: Ձանգն անվճար է: Կարող եք նաև այցելել «Denti-Cal»-ի կայքը՝ **<http://www.denti-cal.ca.gov/>** հասցեով:
- Ատամնաբույժի մոտ ժամադրության ներկայանալիս մի՛ մոռացեք Ձեզ հետ վերցնել Ձեր երեխայի «Medi-Cal»-ի քարտը:

### Հոգեկան առողջության ծառայություններ

Եթե Ձեր երեխային հոգեկան առողջության ծառայություններ են անհրաժեշտ, խնդրում ենք խոսել «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի կամ Ձեր երեխայի բժշկի հետ: Եթե «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը չտրամադրի այդ ծառայությունները, այն Ձեզ կօգնի այդ ծառայությունները տրամադրող գտնել: Այն Ձեզ կուղարկի հոգեկան առողջության մասնագետի մոտ կամ Ձեր շրջանի «Medi-Cal»-ի հոգեկան առողջության ծրագիր:

### Ոգելից խմիչքների և թմրադեղերի կախվածությունից բուժման ծառայություններ

Եթե Ձեր երեխային ոգելից խմիչքների կամ թմրադեղերի կախվածությունից բուժման ծառայություններ են անհրաժեշտ, «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը Ձեզ կօգնի համապատասխան սպասարկող գտնել:

Եթե Ձեզ այլ առողջապահական ծառայություններ են հարկավոր, կարող եք ստուգել «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի հետ և պարզել, թե արդյոք դրանք տրամադրվում են:

## 11. Եթե իմ երեխան ամբողջական «Medi-Cal» ստանա, դա կազդի՞ նրա ներգաղթի կարգավիճակի վրա:

Ոչ, գործող օրենքով՝ մենք պարտավոր չենք ներգաղթի մարմիններին Ձեր երեխայի մասին տեղեկություններ տրամադրել կամ որևէ այլ կերպ նրանց հետ համագործակցել այդ հարցում, և ո՛չ էլ կամավոր կերպով կանենք դա:

SB 75-ի պահանջների համաձայն կատարվող փոփոխությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել DHCS-ի հետևյալ կայքը՝

**<http://www.dhcs.ca.gov/services/medi-cal/eligibility/Pages/SB-75.aspx>**